ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"_11_" փետրվարի 2014թ. №_13 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5-Ի N 253-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ, <<ԿՈՐՆԻՁՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով և 70-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն ՀՀ Սյունիքի մարզպետի 1997թ. մարտի 14-ի <<Կորնիձորի միջնակարգ դպրոցը Ազնիվ Բալասանյանի անունով կոչելու մասին>> N 91 կարգադրության և <<Կորնիձորի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2013 թվականի օգոստոսի 28-ի գրավոր առաջարկության, որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010 թվականի նոյեմբերի 5-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները նոր խմբագրությամբ հաստատելու մասին>> N 253-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 41-րդ կետում <<Կորնիձորի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) կազմակերպության կանոնադրության 1. ընդհանուր դրույթներ 1-ին գլխի 1-ին և 2-րդ մասերում <<Կորնիձորի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություն բառերը փոխարինել <<Ազնիվ Բալասանյանի անվան Կորնիձորի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություն բառերով, իսկ 3-րդ կետում <<գ.Կորնիձոր>> բառերից հետո լրացնել <<փողոց 29/1>> բառերով:

2. Հաստատել << Կորնիձորի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը և լրացումը:

3. Կազմակերպության տնօրենին՝ դիմել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տարածքային բաժին կազմակերպության կանոնադրության մեջ կատարված փոփոխությունը և լրացումը պետական գրանցում կատարելու խնդրանքով:

4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2014թ. փետրվարի 11
ք. Կապան